

ԱՐԶԱՆՈՅՍ ԱՐԱՐՏԵԱՆ

Հատը 3 մեծալիք Իզմիլի մէջ

ԿԸ ՀԻՐՏԱՐԱՐՈՒԹԻ ԶՈՐԵՔԵՐԹԻ ԵՒ ՇԱՐԺՈՐԹԻ ՕՐԵՐԸ

Դուրսերը 4 մեծալիք Հատը

Յ. Գ. ՄԱՐԿԵՐԵԱՆ

Համարատու—Տնօրէն

ՏԱՐԵԳԻՆ ԿԱՆԻՍԻԿ

ԻԶՄԻՐ . . . Օսմ. ոսկի 1
ԴՈՒՐՈՐ . . . Մէճիտիյէ 6
ՕՏԱՐ ԵՐԿԻՐ . . . Ֆրանք 25

ԾԱՆՈՒՅԱԳԻՆ

3 զրուէ տողը ՄԵԿ ԱՆԳԱՍ
2 զրուէ . . . ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ
60 փարա . . . ԵՐԵԲ ԱՆԳԱՍ

Չ. Գ. ՊԱՆԹԱՔԱՆԵՐԵԱՆ

Հիմնադիր

Ի. ԴԵՐՋԱԿԵԱՆ, Կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վե-
րաբերակ բոլոր գործերը: Ուղղիչ—Պէտէսմէն

Որ եւ է գրութեան, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ
կը վերաբերի, տնօրէնին կը դրկուի: Սեպտի խան Թիւ 17

ԻԶՄԻՐ

Զորքը շաբաթի, 7/19 Սեպտեմբեր

Իզմիրի ծովախորշին մէջ մէ-
նաջորդէալ նաւարկութեան հա-
մար, Մօնիթէօր Օրիանթալի մէջ
կը կարգանք, թէ այդ մէնաջը-
նորհը երեք տարուան համար
տրուած է եւահեա էֆէնտիի,
թէ նոր ընկերութիւնը, յանձ-
նարարութիւնը բրած է Անգլիոյ
մէջ հինգ նոր նաւուց շինու-
թեան, որոց երեքը մեծ և եր-
կուքը փոքր, և Պօլսոյ Շիրքէ-
թը խալիլիէի նաւուց նման պի-
տի ըլլան: Եւահեա էֆէնտիի ըն-
կերութիւնը, արտօնութեան հը-
րամանագրին համեմատ, տարին
800 օսմանեան ոսկի պիտի աւայ,
իսլահիսանէի օծտ կայսերական
նորակաւոյց վարժարանի կարօտ
աշակերտաց համար:

Յետոյ, յիշեալ թերթը, եահ-
եա էֆէնտիի Պուրնոյլայէ գէպի
Փարսա երկաթուղիի մը շինելու
համար խնդրած արտօնութեան
վրայ խօսելով կըսէ թէ, այդ
երկաթուղին եթէ շինուի՝ խիստ
շատ օգուտներ պիտի աւթէ
նոյն տեղեաց բնակիչներուն, վա-
ճառականական և երկրագործա-
կան տնտեսութեամբ, վասնզի անհոն
տարածութեամբ անհոն հողեր
պիտի մշակուին: Ասկէ զատ ու-
րիշ մեծամեծ օգուտներ ալ պի-
տի ունենայ այդ շինութիւնը հա-
սարակաց ապահովութեան տե-
սակէտով, որ յաճախ կը յուզուի
ասպատակաց խուճերէ:

Մէնթէշէի Սահապին մէջ
Մէլիքի մօտերը ոսկիի հանք մը
գտնուած է: Փափաքելի էր որ
կառավարութիւնը, ինչպէս վեր-
ջերս խորհուրդ յղացած էր, ինք
բանեցունէր այդ հանքը, և թոյլ
չտար զանազան ընկերութեանց
կամ մասնաւոր անձանց՝ որք ի-
րենց անձնական գանձը լեցու-
նէին ի վնաս հասարակաց գան-
ձուն:

Նմանապէս պղնձի հանք մը
գտնուած է, Այոթնի կողմերը՝
մասնաւոր անձի մը կողմանէ, որ
անկէ օգուտ քաղելու համար
հարկ եղած նիւթական միջոցնե-
րը չունենալով, տեղւոյս թղթա-
տան և հեռագրատան վերատե-
սուչ մեծ. երամ էֆէնտի: 00
մէճիտի կանխավարկ մը տուած
է իրեն նախնական ծախուց հա-
մար:

Կը պատմուի թէ, Այոթնի մէջ

տարօրինակ եղելութիւն մը տեղի
կունենայ տաճնէ մը ի վեր:

Կառավարութեան պալատը,
ուր կը բնակի վսեմ. Միւթէսարքի
Նէճիպ բաշա ընտանեօքն հան-
դերձ, մէկ քանի գիշեր կը քա-
կածուի, այնպէս որ չենքին ճա-
կատը բարբոթին կ'եղծանի: Միւ-
թէսարքին և իր ընտանեաց միւս
անդամք քունքնեն արթննալով
խաղաղութիւններ կընեն թէ
ս'ըկէ կուգային այդ քարերը,
սակայն իզուր, ոչ ոք և ոչինչ
կ'երեւին, եթէ ոչ համող քա-
րերը: Այս մասին շատ քննու-
թիւններ կըլլան, սակայն մինչև
հիմա գոհացուցիչ ելք մը չեն
գտած: Ժողովուրդը նախանա-
մութեան ձեռքն բլլալ կըկարծէ
այս եղելութեան մէջ, բայց նա-
խանամութիւնը եթէ ուղէ հար-
ուածել, չենք կարծէր որ քարով
կամ փայտով պատժէ զուր կամ
զինչ, եթէ այդպէս ալ պահանջէ
իր բարի կամքը, միջնորդով կը
գործէ կարծէնք: Ահա այդ
միջնորդը գտնուելու վրայ է խն-
դերը:

Միտիլիի կառավարիչ վսեմ.
Բէմալ Պէյ, ի դատ կոչած է
Բիտի Միւթիթին, Արշիպիլեան
կղզիներու գաւառական վերա-
տեսուչ Ապաուլլահ Հաօպէֆ.
և նոյն տեղւոյ պատժական դա-
տարանի նախարար Նախագահ
Դասպար էֆէնտի, որ Ն. Վսե-
մութեան գէմ զրպարտիչ տես-
բակներ հրատարակած են: Բէմալ
Պէյ իրեն փաստաբան կարգած է
Բէֆիք Պէյ, ի Պօլսոյ:

Տպագրութեան վերատեսուչ
Վափորտէս էֆէնտի երկու օրէ
ի վեր քաղաքս հասած է:

Շարաթ գիշեր նաւահանգիս-
տէս Ֆօշա մեկնելու համար ճան-
բայ ելլող Չըրնըք մը, ուր վեց
հոգի կը գտնուէին, կընկղմի հա-
զիւ նաւահանգիստէն հեռացած
միջոցին: Մէջը գտնուողներէն
երեք հոգի կը կորսուին, որոց
երկուքը գործով ճանրող ու-
թեան ելած էին: Ասանցմէ մին
հայ և միւսը յոյն մ'էին:

Կիրակի իրիկուն եօթարք—Մա-
հալլէ թաղին մէջ, երկու հոգի,
մին Հրէայ և միւսը Արապ, կուռի
բռնուելով, այս վերջինն իր հա-
կառակորդը կը սպաննէ գանակի
հարուածով: Մարդասպանը կը-
բռնուի:

Այլ—Տիմիթի թաղին մէջ եր-
կու փոքրիկ տղայ նոյնպէս կը-
ուռի բռնուելով, ստանցմէ մին
միւսը կը վերաւորէ գանակով:
Ցաւալի է որ շատ կանուխ սկսած
է աշակերտիլ Ռօքամպօլի, այդ-
տղան:

Տեղւոյ Յոյն թերթերէն Արմանիա
իր երեկուան թուով հետեւեալը կը
հրատարակէ չայ գերասանաց և Պ.
Սքիլիցիի յօդուածին նկատմամբ:

Մեր հանրածանօթ հայրենա-
կից Պ. Սքիլիցիի, Աթէնքի լրա-
գրաց միոյն մէջ խիստ ընտիր և
հմտալից տեսութիւն մը հրա-
տարակած է, ուր գովեստ կը-
կարդայ Ֆալթըրի հայ գերա-
սանական խումբին ներկայացու-
մէն, և մասնաւորաբար Լէպ-
լէպիճի Հօր—Հօր աղա ներկա-
յացման յաջողութեան վրայ:

Մեր պաշտօնակիցն Արշիպիլե
Արարատեան, քիլիցիի յիշե-
ալ տեսութեան հայերէն խիստ
ուղիղ մէկ թարգմանութիւնը հը-
րատարակեց իր վերջին թուոյ
մէկին մէջ, ուր մեր հայ հայ-
րենակցաց ազգային անձնաւի-
րութիւնը շոյեց, որք իրենց մէջ
գոհութեամբ կը խօսին Պ. Սքի-
լիցիի տեսութեան վրայ:

Արդ, չենք կարող հասկնալ
թէ, ինչպէս տարածայնութիւն
կը պտտի որ Պ. Սքիլիցիի առնը
գիշեր ատեն քարկոծուած ըլլայ
յիշեալ տեսութիւնը գրած ԲԷ-
լալուն համար:

Մտոյգ է, որ պատմութեան մը
տրուեցաւ Պ. Սքիլիցիի տեսու-
թեան այն մասին՝ ուր Աթէնքի
Գոնիքի վարժարանի նկատմամբ
խառնութեամբ կը խօսէր, և այդ
պատմութեանը կը հերքէր Պ. ԲՄ.
քիլիցիի այդ գիտողութիւնը:
Հաւանական է որ Պ. Սքիլիցիի
գրածներն անհաճոյ թուեցան
յոյն թատերախումբին անդամաց
ոմանց:

Սակայն Աթէնքի, ինչպէս նաեւ
Իզմիրի հասարակութեան ուրիշ
բանջմար, եթէ ոչ քաջաբերէլ
հայ խումբին առաջին քայլերն
ի զորդացումն երաժշտութեան ի-
ւար, որոց հետ կ'ապրին և
կը պարտաւորինք ապրիլ, մենք
Ասիոյ օրգիքս, եղբայրական սի-
րով:

Քաղաքի մէկ քանի փողոց-
ներն անանցանելի դարձած են
իրենց անկարգ վիճակով: Մաս-
նաւորապէս կը յիշենք Մէլիսնէ
Պօղազի և Պամախանէի բազմա-
մարդ փողոցները, որոց քարա-

յատակները նորագելու և կամ
կոյանոցները մարքելու համար,
քարերը քակուած են շատ ա-
միսներէ ի վեր և կը մնան այդ-
վիճակին մէջ: Չենք կարող հա-
կնալ թէ, թողապետութիւնն
ինչ օրի կը տալէ անոնց քարե-
րը յատակելու համար: Պամա-
խանէի փողոցին քարերը ստնց
պատերուն առջև դիզուած կը-
մնան, որ ըլլանք կը կազմեն
կարծես: Թո՛ղ որ Իզմիրի նման
քաղաքակրթեալ և բազմամարդ-
քաղաքի մը պատիւ չբերէր փո-
ղոցներուն այդ ողբալի վիճակը,
այլ նաեւ ամեն բոլոր անհաճոյ
եղելութիւններ տեղի կունենան
ի վնաս անցորդներու: Գրէթէ
միշտ կը տեսնենք այդ փողոցնե-
րու մէջ անախորժ գէպեր, որոց
իրք օրինակ յառաջ կը բերենք
տակաւին երէկ Պամախանէի ան-
յատակ փողոցին մէջ պատահած
անախորժ գէպ մը՝ որ տեղի ու-
նեցաւ իմաստ խումբ մը կանանց
որոց հագուաները ախորժակով
ծածկուեցան:

Յայտնի է որ, յիշեալ փողո-
ցին պատին վրայի ջրամուղ խո-
ղովներէն հոսած հեղեղանման
ջուրերուն և քարայրատակին չգու-
յովեան պատճառաւ, փողոցին
զանազան կէտերը ճահիճներ
դարձած են, որոց մէջ սանձա-
ձակ կը վազցունեն կենդանիները,
և կտուքերը, որոց ոտքերէն
ցալթած տիղջն ու ջուրը ալ ու-
ձակ կը փախն առանց խնայելու
անցորդները: Այս անհաճոյ վի-
ճակին հանդիպեցաւ ահա, ինչ-
պէս շատեր, նոյնպէս յիշեալ
կանանց խումբը: Անգամ մը ևս
հարցունելով, թէ ինչ կրնայ ԲԷ-
լալ պատճառ փողոցներու այս
անկարգ և ողբալի վիճակին նը-
կատմամբ եղած անտարբերու-
թեան, խանրահար կը խընդ-
րենք մեր թողապետութեանց
պատուաւոր նախագահներէն, որ
ուշագրութիւն ընեն իրաց այս
վիճակին դարման տանելու:

Քաղաքիս փոխախալ կառա-
վարիչ Հաճի Նաշիա բաշա, շա-
բաթ օր քաղաքէն մեկնեցաւ
Վիլայէթին ներսերն այցելելու:
Նօրին Վսեմութիւնը կիրակի օր
քաղաքս պիտի վերադառնայ
Ագահիսար, Գըք Աղաճ, Սօմա
և այլն այցելելէ ետեւ:

Երկուշաբթի օր երեք հարիւրէն
աւելի Ձէքքէզ գաղթականներ
հասան մեր նաւահանգիստը,
որք Պէրսի թեղաւորուելու հա-
մար ճանբայ ելած էին Պօլսէն:

Նոյն օրը մեկնեցան իրենց բնա-
կատեղին:

Ռէֆօրմի մէջ կը կարդանք.
«Կիրակի իրիկուն ժամը ութին
23 վայրկեան մնացած՝ մեր հո-
րիզոնին արեւելեալ կողմը լուսա-
փայլ մէտէնում մը տեսնուելով
դէպի հիւսիս ուղղուեցաւ, ուր
աներկոյթ եղաւ, իր մեծ ու-
թեամբն ու իր անհամեմատ պայ-
ծառութեամբ հանգիստեաններն
զմայրումի մէջ թողելէ ետեւ:

«Մենք չգտնուեցանք հանդի-
սատաներուն մէջ, բայց կը կար-
ծենք որ, այս երեւոյթն այն օ-
գաբարիէն առաջ եկած է՝ զորս
Լափլաս կը կարծէր թէ Լուսնի
հրաւր խնդրէն առաջ կուգային:
«Այժմ Լափլասի կարծիքն
անբնդունելի է գիտնոց մէջ, որք
կըսեն թէ, ատոնք մարդակային
փոքրիկ մարմիններ են՝ որ անը-
պեկան մէջ կը շրջին և զորս մեր
երկրագունդն առ ինքն կը ձգէ,
երբ իր ձգողական զօրութիւնը՝
նոյն շարժման զօրութենէ աւե-
լի է:»

Գաւառի գաւառական վերա-
տեսուչ Բամիլ էֆէնտի Սէլանի-
կի գաւառուր կարգուելով, մեկ-
նած է քաղաքէն:

Խաղալի նախորդ միւթէսա-
րքը, որ քաղաքս կը գտնուէր,
երկուշաբթի օր քաղաքս ձգե-
լով մեկնեցաւ գէպի և Պօլսոյ:

Թաղապետութեան Ա. շրջանա-
կին ժողովոյ անդամք վերտօն
ընտրուելով, հետեւեալ անձինք
Ժողովական կարգուած են:

Պալեօլեան Մատթէոս էֆ.
Սպարթական Հ. Կրպեա. էֆ.
Հաճի Տափուր զատէ Թէմիքի
Ալան օղլու Լէանիտի էֆ.
Օսման զատէ Խոմայիլ էֆ.
Պալէզ զատէ Օսման էֆ.
Ձէլթին զատէ Մէհմէտ էֆ.
Կարապետեան Աբրահամ էֆ.
Բէքէթմէճի տամաթ Օսման է.

Վեյ անուղղակի արոյ պաշ-
տօնեաներէն մին Սէյաթ-Բէյի
մէջ տուն մը մոնելով, 22 օրս
ձխտտաւ և զանի կարելու վե-
րաբերող գործիքներ կը ձերբա-
կալէ: Սրկնաց ներգաւառները ևս
ձերբակալուելով Իզմիր կը բեր-
ուին:

Մէհմէթի ընկերութեան Ռիօ
Առանտէ չոգենալը հինգ շաբթի
Իզմիր կը հասնի Մարտիկայէն:

կայ թէ Արմանիւ մօտէրս առաւ ջարկութիւն մը պիտի ընէ, և որ վեհաժողով մը դուժարելու հաւասարուն նպատակը պիտի ըլլայ՝ խորհրդակցել տեղութեանց ընդհանուր փոխադարձ պինտութեան վրայ:

Բարիզէն միւսնոյն թիւով հեռագիր մը կը ծանուցանէ թէ, նոյն օրը Բարիզէ Առեւտրական Ատենան 20 միլիոն ֆրանք վճարելու դատապարտէր է «Իւնիւսի Ժէնէրալ» գրամատան ընկերութեան վարչական ժողովը: Այս դատաւճիւրը կը շնչէ նաեւ յիշեալ ընկերութեան հրապարակ հանած վերջին երեք կարգ արժէթովները:

Բարձր Խըտիլը, որ Ստորին Եգիպտոսի կողմէն այցելութեան գացած էր, Գահիրէ հասեր է ամսոյս 14ին:

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱԼՄԱՆԱ

Կաղէթ Տիւ Նօս լրագրոյ յօդուածին նկատմամբ, Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Պ. Շալմէլ-Լաբուռի և Արմանիոյ գեղարքային հոգեւոր իշխանին մէջ տեսակցութիւն մը եղած է, կըսէ Արմանիոյ լրագրոյ թղթակիցը:

Արմանիոյ գեղարքայի պիտի տուէր է, թէ յանձնարար կերպով թշնամական ձգտում մ'ուսնեալ կարծուած էր Կաղէթի յօդուածը, թէ սակայն այդ յօդուածը պաշտօնական վաւերութիւն ունէր, գրեթէ ըստ հիման:

Այս վաւերութիւնը պատճառաբանեալ էր գաղղ. մամուլը կըրկնակի յարձակումներէն:

Շալմէլ-Լաբուռ. պատասխանէր է թէ, մամուլն ազատ է և կառավարութիւնը չկրնար ուղղել անոր վեճերը: Միակ այն պարագային մէջ կրնայ միջամտել կառավարութիւնը, երբ մամուլն օտար վեհապետի մը անձին դպչի:

Սակայն միւսեւ այդ վայրկեանին և ոչ մէկ գաղղիացի լրագրագետը Արմանիոյ կայսեր դըպած է:

Հոգեւոր իշխանը պատուական էր թէ, արմանիական կառավարութիւնը չգնահատիր կայսեր դէմ անձնական յարձակումներէ, այլ՝ առհասարակ մամուլը կուտայ եղանակէն:

Առ այս Շալմէլ-Լաբուռ. պատասխանէր է թէ, կառավարութիւնը չկրնար ազդեցութիւն ընդունել մամուլի մը վրայ և ոչ ալ լրագրի մը կը ներքնէ: Դեռ պահը կը ծանշայ սակայն որ նոյն իսկ արմանիական լրագրագետներն ալ յաճախ խիստ հեռուն կերթան որ փափաքելի չէ: Յետոյ արտաքին գործոց նախարարը դիտել տուէր է Հոգեւոր իշխանին թէ, գաղղիական նախարարն ունի Արմանիոյ Բիշէր-նէրի, Իմիլիմանի, Հէրմէի և Սիմիօքի բոլոր այն երգերը, որոցմով Արմանիոյ երիտասարդներուն՝ Ֆրանսայի դէմ տեսելութիւն կ'ուսուցանէ, Ֆրանսա՝ որ ըստ իրենց, ջնջուիլ պէտք է ազգաց մէջէն:

Գաղղիոյ կառավարութիւնը բը-

նաւ մտքէն չանցուց ատոր դէմ բողոքելու: Շալմէլ-Լաբուռ. աւելցուցէր է թէ, Կաղէթ ալ չ'Արմանիոյ Տիւ Նօսի նմանօրինակ յօդուած մը համաձայնութիւն գոյացուներու բնութիւն չունի, համաձայնութիւն մը՝ զոր կը բաղձան եւրոպայի մէջ բոլոր պետական իրաւախոհ մարդիկ:

—o—

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Վազըթ կէս—պաշտօնական թերթը իրաւամբ զարմանք կը յայտնէ, որ Պէրլինի գաշտագրութիւնն ստորագրող տեղութիւնը անտարբեր աչքով կը դիտեն Պուրկարիոյ մէջ քաղաքական պատահարները, որք այդ երկիրն անիշխանութեան մատնելու կըստաւան, անիշխանութիւն մը որոյ հետեւեալը վնասակար պիտի ըլլայ մասնաւորապէս տեղւոյն մահմետական ժողովրդոց: Աւելորանար իշխանին բարի գիտաւորութիւններէն ոչ ոք կը կատարէր իր վարչութիւնէն, որ ամեն պարագային մէջ անկարողեղաւ երկրին խաղաղութիւնն ու կարգն ապահովելու: Վազըթ եւրոպայի բոլոր արդարաւոր մարդոց ոչ չ'ազդեցութիւնը կը հրաւիրէ Պուրկարիոյ մահմետականաց բազմութիւնը:

ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Սժմանարտ լրագրոյ Հոնկ-Գոնի թղթակիցը Քանթոնի նոր փոխարքային հետ տեսակցութիւն մը ունեցած ըլլալով, սոյն տեսակցութեան նկատմամբ կը գրէ յիշեալ լրագրին:

Այսօր տեսակցութիւն մը ունեցայ Շանի-Սիւ-Սիւի փոխարքային հետ, որ մօտերս հասաւ հիւսիսային Չինաստանի կառավարութիւնն ստանալու, խիստ մարդավարութեամբ ընդունեց զիս և խիստ ազատօրէն խօսեցաւ ներկայ կացութեան վրայ: Իմ հարցմանցս ի պատասխան, համարում ցուցեց թէ Քանթոնի նահապետը ըստ իրենց իմացութեան չինական զօրքեր գումարուած էին: Ըստ ինձ թէ, ամենին հրաման մը չորոշեցաւ և ոչ մէկ զօրագնէի որ սահմանադրուէր անցնի: Սակայն իմացութեամբ որ, ինչպէս գրեթէ անխուսափելի է ներկայ պարագայից մէջ, բազմաթիւ դատաւարներ ամեն օր խափրին հրաւաններու բանակը կը տուրաքուէին, որոց գլխաւորն ամբողջ Չինաստանի մէջ զինուորական մեծ մարզու մը հռչակն ստացաւ, և ընտանաւոր, ինչպէս որ կը ծախարարուէր օտար յարձակողաց դէմ, իր զօրքերուն գնալով մը գրաւեց: Փոխարքան հաստատար, չինական զօրաց Թոնքին մաներուն զօրացին, վանդի, կըսէ, ինչպէս առանց հրամանի կրնայ այդպիսի բան մը ըլլալ: Կարելի է սակայն որ գաղղիացեաց պարտութեան լուրը՝ պատճառեղաւ չատ անհասօլից սահմանադրութիւն անցնելուն, այս է ահա որ յառաջխաղացութիւն մը կարծուեցաւ: Չինաստան չորիս վաւերէ, յարեց փոխարքան, Ֆրանսայի և Աննամի մէջ եղած դաշնագրութիւնը: Եթէ Ֆրանսա, Բարիզի չինական դեսպանին հետ դաշնագրութիւն կարգադրութիւն մը չ'ունէ պատերազմն անխուսափելի է:

Շանի-Սիւ-Սիւի փոխարքան լաւ տեղեակ թուեցաւ Ֆրանսայի և Անգլիոյ մէջ եղած յարաբերութեանց, և

ինձ քանի մը հարցումներ ըրաւ Մատակարար ըրած ճանորդութեան, և Քամաթապի դործին մէջ՝ Անգլիոյ կարծեաց վրայ:

Զինաստանին մասնաւոր անձի մը զրկուած նամակ մը կը հաղորդուի թան լրագրին, որմէ հետեւեալ պարբերութիւնները կը հրատարակէ:

«Չին Մանտարինները չափազանց անցաւ են, իրենց երկրին վրայ գրաւած ամեն բանի նկատմամբ: Ամեն օր թարգմաններ կ'երթան դատարաններ՝ Եւրոպական լրագիրները թարգմանելու համար: Այսօր (հունիս 10) հեռագիրը կը բերէ իրենց՝ Խորհրդարանի նիստերուն խիստ մանրամասն պարագայից պատմութիւնը, ուր Քոնքինի վրայ կը խոսուի: Գիտեմ որ անցեալ չորս թու 25-ի մարտի 23,000 ֆրանք ծախքով հեռագիր մը զրկեց հա: Ինչ որ բնէն Չինաստան ստակ ունի: Բայց ի հարկին կը ծախէ զայն, այդ ուրիշ խնդիր մ'է:»

«Ինչպէս գոցէ, որ մայիսի ըստիկանները յեղափոխական գաւազդութիւն մը երեւան ելաւ որ Ու-Չանի-Ֆու քաղաքին մէջ պիտի ծագէր, եթէ դաւադիրներէն մէկուն անխոհեմութեամբ՝ երեւան չ'երթէր: Եթե անստանդէն ու թաւն զրգանքներ կորուսեցան, սակայն հաղորատու ըմբոստներ պատրաստ կան ուրիշ տեղեր սպառնալու համար: Քանի իշխանը և իր կուսակցութեան պահպանողականը չատ լաւ գիտեն, որ արտաքին պատերազմ մը բազմախառն ապստամբներու ապստամբութիւն կարողայ: Անցած չորսու կըստէր թէ, նոյն ինքն կոյսուհին երկու ունի իշխանական ցեղին համար, և թէ ինք խիստ կողմնակից է խաղաղութեան, հակառակ Յի-Նի իշխանին կամաց: Յի-Նի կայսրուհին տաղը և Քուան-Սիուի հայրն է:

ԱՉԳԵՅԻՆ

—

Մատին մէջ կը կարդանք:

Կըսենք թէ Խրիմեան Սրբազան երեք չորսու առաջ կ'իր մը ստորագրելով յանձնած է Վանայ կուսակալ Հասան փաշային, յայտարարող թէ Վանայ 12 երկուեկայ հանրածանօթ հեռագիրն, որով երկրին վեհապետ կատարեալ գոհութիւն կը յայտնէին, ճիշդ և անկեղծ է, և ինք համաձայն է զայն ստորագրողաց, իսկ այդ հեռագրոյ դէմ բողոք բարձրեցնող խաժամուժ ամբողջի դատին և եթ կը վերաբերին, որոյ խօսքերը նշանակութիւն չունին, և այլն, այլն:

Կըսենք նաեւ թէ Խրիմեան Սրբազանի այս դիրքն, հանդերձ այն բացատրութեան նամակաւ զոր յղած է առ Ս. Պատրիարք Հայրն, կարգացուած է Քաղաքական ժողովի վերջին նստին մէջ:

Կ'ենթադրուի թէ Խրիմեան Սրբազանի ստորագրած գրութիւնը Հասան փաշայի կողմէ շատոնց հաղորդուած է Դուռը:

Փափաքելի էր որ Վանայ հրաժարեալ Առաջնորդին և նախկին Պատրիարքին այդ ստորագրած թուղթն իւր ամբողջութեամբ հրատարակութեան յանձնուէր:

— Գոհութեամբ կը լսենք թէ Վանեցի ազգայնոց մէջ չարժուժ մը կայ Փոքիւրդական Միւրիչ Էֆենտիի վանայ մէջ բացած կեդրոնական վարժարանը կանգուն պահելու համար: Առանց դրա-

մական նպատակի մը, տարակոյտ չէր մնացած թէ Փոքիւրդական Էֆենտի պիտի պարտաւորուէր փակել այդ կրթարան, որովհետեւ զայն կանոնաւոր վիճակի մը մէջ պահելու համար իւր քաղաքին ալ բաւական զոհողութիւն ընելէ յետոյ, Փոքիւրդական Էֆենտի երմոտացոյցի աճեցուն բացի մը առջեւ կը գտնէր զինք: Բայց Կեդրոնական վարժարանը կրնայ մեծ ծառայութիւն մատուցանել Վասպուրականի ժողովրդեան միջնակարգ կրթութիւն մը տալու մասին: Աստի և արժանի էր լաւագոյն բախտի մը: Առ այժմ, որքան ենք տեսնելով թէ մայրաքաղաքս գտնուող Վանեցի պատուաւոր ազգայինը կը զգան զայն, և հանգանակութիւն մը բացած են ի նպատակ Կեդրոնական վարժարանին Վասպուրականին: Իր յաւանք թէ այս հանգանակութիւն ըլլ անուանական բան մը չլինի, այլ չօշտիկի արդիւնք մը կ'ունենայ: Երազելի իրական նպատակ մը կարեւոր մատուցուիլ Փոքիւրդական Էֆենտիի կրթական այս կարիքը ձեռնարկին: Միւր կողմէ, սա իրականութեան մասին ալ տարակոյտ ունենալու չենք թէ Վանեցիք, եթէ իրենք իրենց թողութիւնը զիւ չեն կարող կանոնաւոր միջնակարգ դպրոց մը պահել, և աւելի կամ՝ նուազ կը կարծուին ուրիշ քաղաքաց, մանաւանդ Կ. Պօլոյ ազգայնոց նիւթական օգնութեան, գէթ միւսի որ Կեդրոնական վարժարանի գոյութիւնն ապահովէ: Ուստի, չկրնարք կը յանձնարարենք մեր Պօլոսեակ կրթութեւ պարագայից ալ, ըստ կարի մասնակցել սոյն հանգանակութեան:

— Յայտնի է թէ Մեծմուսիչի վատի լրագիրը կայսերական կառավարութեան նկատմամբ անուանաբար համարուած յօդուած մը հրատարակած ինքեւն համար խախտուած է:

Ընդհանուր գաղափարութիւնը բողոքած է Մեծմուսիչի Հափաթիսի պատասխանատու անօրէն թողութեան Էֆենտիի դէմ, որ բանաւորական է: Ձոր տիւ Պոսթրիկանայ թէ նախընտի գաղափարն ամբաստանելուն հարցաքննութիւնն աւարտելու հարցաքննութեան թուղթերն ընդհանուր գաղափարին յանձնել է: Սա ալ հարցաքննութեան թուղթերը ընելէ յետոյ իւր ամբաստանագիրը պարտաւորուէր, յաւանքով օրինաւ գործադրուիլ կը պահանջէ երկր: Այս պաշտօնագիր այս օրերս ձեռնհաս գաղափարն պիտի զրկուի երկր գործին ելք մը տալու համար:

ՆՈՅՆ ՏԱՊԱՆԸ ԴՏԱՆՔ (!?)

Ամերիկայի Միացեալ—Տահանդաց Գաղթի լրագիրը իր «գանապան լուրեր»ուն մէջ հետեւեալ կը հրատարակէ, զոր իր նշանակութեամբ կ'իտարգմանենք մեր ընթերցողաց հետաքրքրութեան համար:

«Անշուշտ հետաքրքրութեամբ պիտի կարդացուին, Նոյի Տապանին արդէն ծանուցեալ դիւտին վերաբերող վաւերական տեղեկութիւններ: Թուրքիա քննիչներ զրկած էր, թէ արդեօք Արարատ լեռին ձինակոյտերը

անյաղթելի արդեօք մ'էին հոն ցորեն ցանելու համար: Քննիչները զարմանաօր տեսան սառակոյտի մը մէջ, որ ջրանցի տալու գին նաւաւ մը ցուցին նմանող բան մը կ'երեւէր: Տեղւոյն բընակներն ըսած էին թէ, տապալաւակ բանին դոյութիւնը դարեւ ի վեր ճանաչուած էր, բայց երբ մօտենային անոր, յանկուէր անոր մէջ պատահանին մէջ և սարսափահար կը վախճանէր հետաքրքրեալը: Քննիչներն նախագահն առանց այս խօսքերէն վախ բերելու, այլեւ լեց այդ խորհրդաւոր շէնքը, սրուն պահապան ոգին գերի բընակ մ'առնէր: Նիւ-Եօքքի Պընըլ անուն անձի մը որ Պոստուէյ կը բնակի: Դեռ բնակեցին և տեսնեցին իրենց ստաւ գեցին որ այդ նաւը նոյն ինքն Նոյի Տապանն էր, որ փոշի գարածած կը կարծուէր Արարատ լեռն ինտելի ի վեր, այսինքն 2348 տարի առաջ յան զ'Բիւրատո: Պաշտօնական տեղեկագրին մէջ սա պարբերութիւնն առաջ կը բերենք:

«Ստաւգեցինք որ նաւը չինուած էր Ս. Դրոյ կափեր կոչած «փայտէն», որ կ'ածի եփրատոյ «գաղտնաբան» մէջ: Նախն ներքի կողմը կուտուր ծեփուած էր, «և ձիւրուն զետեղման համար «Մովակալութեան հրամաններն «հաւատարմութեամբ կատարուած էին: Բազմաթիւ յարկեր «կային, 13 սուր բարձրութեամբ «բայց մէկ յարկը միայն կըցանք «այլեւել, միւսները լեցուած էին «սառցով: Ձենք գիտեր «թէ ինչ կ'ըկայնութեամբ տաւ «բաժնուած է Տապանը ստաւցին «մէջ . . .»

Երբ Տապանին մէջ գտնուած թուղթերէ իմացուեցաւ որ ապահովուած էր Արմանիոյ Միւթիւն Լիւսիւսի Դոմիանի ընկերութեան կողմէ, լրագրին մէջ կը ներկայացաւ Պոստուէյի 31 թիւ տունը, այդ ընկերութեան փոխ-նախագահ Պ. Տընիւն հարցաքննելու համար, որ բարեհաճեցաւ հին տարեգրութիւնները բանալ և Քրիստոսն առաջ 2300 տարւոյն տարեգրութեան մէջ հետեւեալ արձանագրութիւնը գտաւ:

«Նոյի կողմէ չինուած մէկ Տապան: Ստաւուածք Նոյի և որդւոյ: 42 միլիոն երեք հարիւր տասն և հինգ հազար ինսուն և հինգ թնոյ: Երկայնք 32 սուր, լայնք 87 սուր և 6 բուր, լուրութիւն 62 սուր և 6 բուր: Փայտ՝ կոփեր: Վիճակուած է ճանորդը և անասուն փոխադրելու: Արձանագրեալ Ա. Ի. 3:

Պ. Տընիս ըսաւ թէ, արդեօք ուսած է իրեն յայտարարել թէ քանի՞ տարահոլուած էր նաւը թէ՛ Նոյի կեանքն ալ տալահոլուած էր, թէ՛ նախն մէջի միւս գտնուածներուն դատ ապահովութիւն մը կ'արդեօք:

Ամերիկացիք . . . ! !

—o—

Զօրապետ Հիւս բաշա 5000 զօրքով յառաջ կը խաղայ: Սուտ մարգարէն որոշած է սաստիկ ընդդիմութիւն մ'ընել: Ահեղ ճակատամարտ մը անխուսափելի կ'երեւի:

ՆԵՐՔԻՆ

Իսթերն Էքսպրեսի տեղեկագրերը 14 թիվ թերթին մէջ հետեւեալ տողերը կը կարդանք .

«Վանէն կ'իմացունեն, և մենք ալ առանց ստուգութիւնն հաւատարմութեամբ այս լուրը , թէ այդ քաղաքի եղբայրացիները հինգ տարի շրջապահաւորուած պարտէր է եղեր Յովհաննէս հայ եպիսկոպոսը , որ քիւրտ մը սպաննած էր իր անձին պաշտպանութեամբ համար : Հաւանաւորաբար յիշատակուող այս , և տաճիկ լրագրի պիտի կըրնան թերեւս այս մասին ստույգ եղբայրութիւնն իմացունել : »

— Եւանայէն կ'իմացունեն թէ , կըսէ վերոյիշեալ թերթը , այդ քաղաքին և շրջակայ գիւղօրէից բնակիչք երկուքի մէջ իսկած են առաջակայ խումբի մը երեւումը տեսնելով , որ գիւղացիները գաւառին կեդրոնին երկու ժամ մը նախով մօտենալու յանդգնած և աղօթեպանի մը տղան վերցուցած է : Հաջորդ հինգ հարիւր ոսկի կը պահանջէ :

— Հագեղաթ լրագիրը կը պատմէ թէ , մօտերս Պոլսոյ մէջ աղջկանց համար արհեստանոց մը պիտի շինուի :

— Խիւտալէսի տեղեկագրերը կ'իմացունեն թէ , Ուշաքի մօտ գիւղի մը մէջ դրամանենգներ ձերբակալուէր և Բէթօմէ հեա ղըր-կուէր են :

— Ատանայի կառավարիչ Ա. պէտին փաշայի նախաձեռնութեամբ յանձնաժողով մը կազմուած է այդ քաղաքին մէջ , վերջերս հոյ ճարակ եղող Հաւսին գիւղի շինութեան հարկաւոր եղած գումարը հայթայթելու համար : Յայտնի է որ Հաւսինի հրկիզեալ ժողովուրդը , մինչեւ հիմայ բարեգուծ և վեհախառն կայսեր շնորհած օգնութիւններով կ'ապրի :

— Պրուսացի լրագրին պատմածին համեմատ կարկուտ այն քան խոշոր և սաստիկ թափէր է այդ քաղաքին շրջակաները , որ գիւղացի կին մը արան աշխատած միջոցին , այդ կարկուտի հարուածներուն տակ մեռեր է :

— Տաճիկ թերթ մը կը պատմէ , թէ գանձուց նախարարութեան հաշուեկալութեան դիւանատունը մաքնամաքիկի դասեր պիտի աւանդուին , սոյն նախարարութեան և ուրիշ վարչութեանց այն պաշտօնաններուն համար որք կը փախաբին թուագիտութիւն , գրհաշիւ և տօմարակալութիւն ուսանիլ :

— Քաթալիոնի կողմերը հանքային ջրոյ նոր աղբիւր մը գտնուէր է : Տարրալուծուելով , տեսնուէր է որ այս ջուրն արդէն գտնուածները կը գերազանցէ :

ԱՐԱՐԱՏԻԹԵԱՆ ՊԱՏԸ

Արարեան ԷԼ Վաթան լրագիրը կը պատմէ թէ , Եգիպտոսի մէջ քանի մը արարեան Միւսթիֆին ներկայացէր են , հարցունելու համար թէ ի՞նչ էր պատճառը որ գօլթրային առան մահմէտականներէն աւելի մեռան քան թէ

քրիստոնէայեաներէն : Վան ղի , կ'ենթադրէին այդ բարի մահմէտականները , հակառակն ըլլալ պէտք էր , քանի որ Աստուած աւելի իրենները պէտք էր պաշտպանել քան թէ անհաւատները :

Հարցումին գոհացուցիչ պատասխան մը տալ դժուար էր , ուստի Միւսթիֆին մէկ օր միջոց ուղեց մտածելու համար Հետեւեալ օրը երբ հարցունողները կրկին ներկայացան Միւսթիֆին , սա՛ պատմեց իրենց թէ Աստուած իր հրեշտակապետներէն մին ղրկած էր իրեն , և ահա ի՞նչ էր ըսած Ամենաբարձրեային առաքելաբար :

«Արքայութեան մէկ պատը փլած ըլլալով , Աստուած՝ զայն վերաշինելու համար իրեն կանչեց իր հաւատացեալը ամենէ հաւատարմները : »

Այս պատասխանին վրայ բուրովին գոհ մեկնեցան , բայց իրենցմէ ոմանք խիստ տրտմեցան որ Տէրը չէր բարեհաճած ղիւրենք ալ երկնային որմնադիրներուն կարգը գասերու :

Չայս պատմող թերթը կըսէ թէ , այս զարմանալի պատմութիւնը մահմէտականաց մէջ տարածուած է , և ամենէ կրթեալ և լուսամիտներն իսկ կատարեալ հաւատք ընծայել կըցուցնեն :

Յուսանք գոնէ որ , Ամենակալն Աստուած գոհ պիտի ըլլայ , իր այդ գօլթրահար գործաւորներէն :

ԱՌ ՊՐՈԹԷ

Խօսէ Պրոթէ՛ , ինչո՞ւ կա լուս , Դէմք Է՛ր սյուպէս է միշտ տխուր : Երկանցք յուզի այդ առաջար , Բահրդ ունիս քեզ սըրտով յար : Ձեռքն ի գործ է , սիրտն անթափուր : Արի՛ , կոխէ խոշտ առաքուր : Կտմքն ամենու յաղթահարէ , Եթէ հաստատ ղիւր քայլն առնէ : Անկեղծ է քեզ ցուցնողն ուղի , Ն'անձն ինուէր ձեռնադրիս :

ՍՊԻՆԻՔՍ

Անգլիացի Սուլիֆի գրագէտն որդին ամուսնացնելու կը պատրաստուէր , երբ բարեկամներէն մին դիտողութիւն ըրաւ թէ գեւ պղտիկ է և լաւ կըլլայ որ խելքը հասունայ . « Եթէ որդւոյս խելքը հասունայ » պատասխանեց՝ « ա՛լ չ'ամուսնանար » :

— Մարդկային սեռն ապահովագէտ պիտի ոչնչանար , եթէ չարախօսներն իրենց լեզուէն և չարախօսութեան ունկն դնողներն իրենց ականջներէն կախենին :

— Խուլ այր մը և կոյր կին մը միայն երջանիկ ընտանիք կրնան կազմել :

— Թագաւոր մը կը ծաղրէր իւր պալատականներէն մին , զոր յաճախ օտար տէրութեանց քով դեսպան ղրկած էր , բաւով որ կապիկի կը նմանի . « Վեհափառ Տէր » կը պատասխանէ պալատականը « չեմ գիտեր թէ ինչի կը նմանիմ , միայն սա գիտեմ թէ շատ մը պարագաներու մէջ ըզձեզ ներկայացուցած եմ » :

— Աւելի գիւրին է գտնել

կին մը որ բնաւ տարփածու ունեցած չըլլայ քան կին մը որ մէկ հատէ աւելի ունեցած չըլլայ :

ԿՆՈՒՆ (1900)

ԼՈՒԻՋ ՄԻՇԵԼ

Այս հանրածանօթ յեղափոխական կինը , որ անցեալները վեց տարի բանտարկութեան դատաւարաւորուելով , այս միջոցիս Գլէրմոնի բանտին մէջ իր պատիժը կրելու վրայ է , անցեալ օր Բարիզ բերուեցաւ ներքին գործոց նախարարութեան մասնաւոր մէկ արտօնութեամբ :

Լուիզ Միշէլ անմիջապէս տարուեցաւ իր մօրը քով , որ հոգեվարքի մէջ է : Լուիզ Միշէլ խիստ գոհ և բարեբաղդ կըցուցնէր ինքիցնր իրեն շնորհաւոր այս նպատակն համար : Մայրը կը կարծէ թէ իր աղջիկը Բարիզի մէջ բանտարկուած է , և կը յուսայ թէ քիչ ատենէն պիտի ազատի բանտէն :

Նոյն իրիկուն Լուիզ Միշէլ Ան-Լազար անուն բանտը տարուեցաւ , ուրիշ հետեւեալ առաւօտ տարուեցաւ դէպի Գլէրմոն իրեն յատկացեալ բանտը :

ԾԱՆՈՒՑՈՒՄ



LA PHARMACIE
GAETANO Lti PERPIGNANI

ԿԱԵԹԱՆՕ Լ. ԲԵՐԲԵՆԻՍԻՆԻ ԴԵ Դարանը փոխադրուած է Վիթէի նոր Զէրլանդէն , ձրէնք Մահալէի :

Այս դեղարանը , որ 1709 ին հիմնուած է և որ նոյն ատենէ մինչեւ այսօր չէ դադրած գործելէ , ի մեծ գոհունակութիւն Իզմիրի հասարակութեան , այսուհետեւ ևս պիտի ծառայէ , գիւղերներն ալ բաց մնալով և ունենալով Պ. Մարք Քանյիլիքի ձեռնառութիւնը , որ առաջին կարգի դեղագործ մ'է , և որ իբր ընկեր այս դեղարանը կը մօտէ :

Գեղարանին անունը պիտի ըլլայ , ԳԵՂԱՐԱՆ ԿԱԵԹԱՆՕ Լ. ԲԵՐԲԵՆԻՍԻՆԻ , յաջորդողը Ն. Կ. ԲԵՐԲԵՆԻՍԻՆԻ ԵՒ Մ. ՔԱՆՁԻԻԲ . և ընկերութեան անունը պիտի ըլլայ Ն. Կ. ԲԵՐԲԵՆԻՍԻՆԻ ԵՒ Մ. ՔԱՆՁԻԻԲ :

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պ. Յ. Պերպերեան պատու ունի ծանուցանել հասարակութեան որ թէ տախտակի և թէ մետաղներու վրայ ամեն տեսակ ՓՈՐՍԿՐՈՒԹԻՒՆՆԵՐ ընելու պատրաստ է ամեն գիններով : Կը ապէ նաև ԱՅՅԵՏՈՄՍԵՐ , հարսանեաց , յուղարկաւորութեան հանդէսի ինչ ՀՐԱՆԻՐԱԳՐԵՐ , թէ մեծ և թէ փոքր ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ , ԸՆԿԱՆԱԳՐԵՐ , ՓՈՒՆԱՆԿԱԳՐԵՐ , նամակի ՎԵՐՆԱԳՐԵՐ և ինչ : Կը շինէ նաև պատերու վրայ զանազան նկարներ , և խանութներու վրայ կախուած նշանաբաններ և ապակիներու վրայ զանազան տեսակ գրերով անուններ եւայլն :

Պէտք ունեցողը կրնայ գիտնել Սէվրի Խան , վերի յարկ թիւ 17 Լրագրոյս սենեակը :

ԱՌ ԶԵՆՆ ԼՈՒՐԵՐ

Մատաղ կին մը Թրանփայ կրմանէ հետն ունենալով այլ գործերուն մը , զոր գուրդուրանը իր ծուկէն բուն վրայ կը նստեցունէ : Ճանրորդները կրակին . . . մօր . . . մատաքաշիք կըսին . . . հարցաւորէ :

— Բայց Տիկին . . .

— Ներքեցիք , պատճառ , կրնա միջտիկինը մէկ տօմսակի ստակ երկն զուներով տօմսարաշխին , ներքեցիք հայրս ազգայութեան մէջ ինկած է ա՛յ , և դիմք որ Թրանփայի մէջ ծուկի վրայ նստող ազար չեն վաճարէր :

	քամիօ	թարիֆա	ողջ
Արծաթ մէծիտիէ	23,45	25,05	20
Ոսկի օսմանեան	125,	135,26	107,99
Սթէրլին	137,	148,25	118,36
Ոսկի գաղղիական	109,50	118,49	94,60
Վեցնոյ	101		
Հինգնոյ	—		
Մէթալիք	63,		
Թղթադրամ	1000		

ՊԱՇՏՕՆԱՏՈՒՆՔ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆՑ

ՀՐԴԵՀԻ

QUEEN

INSURANCE COMPANY

ԹԱԳՈՒՀԻ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼԻՎԵՐՔՈՒԼԻ ԵՒ ԼՈՆՏՈՆԻ

Դրամազուր 2,000,000 Անգլ. ոսկի

ԾՈՎՈՒ

RELIANCE

MARINE INS. CO. LD.

ԾՈՎԱՅԻՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼԻՎԵՐՔՈՒԼԻ

Դրամազուր 400,000 Անգլ. ոսկի

Սոյն ընկերութիւնք Փոքր Աօրոյ գլխաւոր քաղաքաց Գարամանիոյ Սուրիայի , Արշիպեղեան կղզեաց , Բուսէլիի և Յունաստանի մէջ ճիւղեր հաստատած են :

Կեդրոնական Պաշտօնատուն

Ֆրանկայ թաղ Գաէնօրուլոյի փերանէն վերի յարկը թիւ 2 և 3

Ընդհանուր գործակալ
ՃՕՆ Ա. Ա. ԿՈՒ

ԳՐԱՍՏԵԱՆԿ

Բէշտիմալիզար պաշի Սէֆէրեան խան վերի յարկը թիւ 3 մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գիտնել ընկերութեան փոխ գործակալ Յ. Կ. Հիւսնեանի վերոյիշեալ խանին քով Նսայեաններուն մագաղան :

THE

COMMERCIAL UNION

ԴՕՄԷՐՍԻԱԼ ԻՒՆԻՕՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԵՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 2,500,000 ՍԹԷՐԼԻՆ ՈՍԿԻ

— 0 —

Այս ընկերութիւնը հրեհի դէմ կ'ապահովէ Իզմիրի և շրջակայ գիւղերուն մէջ , շէնքեր , կահկարասիներ , ապրանքներ , կալուածներ , գործարաններ ևայլն :

ԴՕՄԷՐՍԻԱԼ ԻՒՆԻՕՆԸ՝ միւս բոլոր ընկերութեանց տուած առաւելութիւնները կուտայ իրեն ապահովուողներուն :

Վճարելիք տուրքերը , մասնաւոր պայմանագրութիւնով մը , այս քաղաքի գանուող միւս անգլիական ընկերութեանց վճարած տուրքերուն հաւասար են :

Վարը ստորագրողները արտօնութիւն ունին այստեղ՝ Ընկերութեան գէմ՝ որիւէ գանգատի գոհութիւն տալու :

ԴՈՐԾԱԿԱԼՔ

RALPH et JOHN GOUT

ՌԱԼՖ և ՃՕՆ ԿՈՒ